# Դաս 34. Փոքր Մհեր

*Կապույտբերդից Սասուն տանող ճանապարհին մի վանք կար՝ Մարդավանք անունով: Դավթին թշնամի յոթ թագավորներն իմացել էին, որ նրա որդի Մհեր այդ կողմով պետք է անցնի: Վանականներին պատվիրել էին, որ իրենց հայտնեն այդ մասին: Երբ Մհերը, Հովանը և Թորոսը վանք են մտնում, վանահայրն այդ մասին իսկույն հայտնում է թշնամիներին, որոնց անհամար զորքը գալիս և շրջապատում է վանքը: Մհերին հաջողվում է Հովանի և Թորոսի օգնությամբ ջախջախիչ պարտության է մատնում թշնամուն: Մհերը պատժում է վանահորը՝ մատնության համար: Իսկ վանքի անունը փոխում է և Մարդավանքի փոխարեն անվանում Մատնավանք:*

